ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքը նվիրված է հայ ժողովրդական դարբնոցային մշակույթի ծիսական բնագավառի ուսումնասիրությանը: Հետազոտության համար հիմք են ծառայել մինչև մեր օրերը Հայաստանի գյուղական բնակավայրերում պահպանված և տարեց վարպետների կողմից հաղորդված մի շարք ծեսեր և ծիսական արարողություններ, որոնք ուղեկցել են դարբնի աշխատանքը: Դրանցից որոշները ունեցել են էպիզոդային դրսևորումներ, իսկ որոշներն էլ հանդիսացել են համայնքի տոնածիսական կյանքի բաղկացուցիչը: Ավանդական դարբնոցային մշակույթում ծիսական գործողությունները համարվել են նույնքան կարևոր, որքան բուն արհեստավորական հմտությունները և սերնդից սերունդփոխանցվել են: Հարկ է նշել, որ դարբինը համայնքում ունեցել է հատուկ կարգավիճակ, որը նրան տրվել է ինչպես արհեստի կիրառական կարևորության, այնպես էլ համայնքի ծիսական կյանքում նրա ունեցած հատուկ դերի համար: Դարբինը եղել է համայնքի ամենից յուրօրինակ ծիսական դեր ունեցող արհեստավորը: Նկատենք նաև, որ ոչ միայն դարբնությանն ուղեկցող ծեսերը, այլ նաև դարրնի աշխատանքային գործընթացը հարուստ է եղել խորհրդանշանային բնույթի տարրերով: Ավելին, ծիսական դեր է ունեցել ոչ միայն դարբինը, այլ նաև դարբնոցը: Դարբնոցային մշակույթի ծիսական առումների ուսումնասիրությունը խորապես առնչվում է այն ներկայացնող խորհրդանշանների իմաստաբանության հետ, ինչի պատճառով էլ աշխատանքում մեծ տեղ է տրված դարբնոցային ծեսերի խորհրդանշանային ենթատեքստի և դրա ակունքների ուսումնասիրությանը: Կարելի է ասել, որ հետազոտության հիմնական նպատակը դարբնոցային ծիսական կյանքի և խորհրդանշանների իմաստաբանությունն է, որն էլ իր հերթին ծառայում է մի այլ նպատակի՝ պարզաբանելու դրա մշակութային արմատները:

Դարբնոցային ծեսերի և խորհրդանշանների իմաստարանական ստուգաբանության արդյունքում բացահայտվեցին այնպիսի մշակութային շերտեր, որոնք վերաբերում են ոչ միայն հայ ժողովրդի պատմության վաղնջագույն շրջանին, այլ նաև հնդեվրոպական առասպելարանության ընդեանրության շրջանին: Այլ էթնիկ մշակույթների հետ համեմատությունները ցույց են տալիս, որ հայնական նյութը բազմաթիվ զուգահեռներ ունի հատկապես հնդեվրոպական ժողովուրդների հետ: Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ մինչև մեր օրերը հասած դարբնոցային ծեսերը և խորհրդանշանները կամրջվում են մեր մշակույթի դարերի խորքը զնացող ավանդույթների հետ, ինչը թույլ տվեց եզրակացնելու, որ մեզ հասած դարբնոցային ծեսերը ծագել են արհեստի ձևավորման ամենավաղ փուլում և սկզբնական շրջանում տարանջատված չեն եղել բուն տեխնոլոգիական զործընթացից: Ավելին, տեխնոլոգիական գործընթացն ինքը այն աստիճան ծիսականացված է եղել, որ դժվար է ասել թե արհեստն իր ծագման շրջանում կիրառական, թե՞ ծիսական նշանակություն է ունեցել: Մեր այս եզրակացությունը այսօրվա մարդու մտածողության համար կարող է անսովոր թվալ, բայց այն լիովին համապատասխանում է նախնաղարյան շրջանի մարդու սինկրետիկ մտածողությանը, որում միահյուսված են իրականությունն ու առասպելականը և առասպելը ավելի շատ մտածողության և աշխարհընկալման կերպ է, քան բանահյուսական պատում: Ուստի պատահական չի կարելի համարել, որ աշխատանքում հատուկ պարագրաֆ է նվիրված տեխնոլոգիական զործընթացների ծիսական ենթատեքստի ուսումնասիրությանը: Խնդիրը նրանում է, որ դարրնոցային տեխնոլոգիան հագեցած է ժեստային, թվային, դիրքային և այլ բնույթի նշանային տարրերով, որոնք ունեն ինչպես հաղորդակցական, այնպես էլ արհեստավորության տեսանկյունից ոչ ֆունկցի-

ոնալ և խիստ խորհրդանշային բնույթ: Այս տեսանկյունից հատուկ ուշադրություն է դարձված նաև դարբոցի և դարբնության հետ առնչվող տարածաժամանակային երևույթներին, ինչպես ասենք դարբնոցի ներքին տարածության կազմակերպման և գյուղի տարածական կառույցում նրա տեղի խնդիրներին, որոնք մեզ հնարավորություն են տվել բացահայտելու դարբնոցային մշակույթի խորհրդանշանային մի շարք առումներ, որոնք համահունչ են ծիսական գործողությունների ստուգաբանության արդյունքում կատարված բացահայտումներին:

Աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվում համայնքի հաղորդակցման համակարգում դարբնի և դարբնոցի ունեցած դերին: Թե՛ սրբազան, թե՛ առտնին կյանքում դարբնոցը և դարբինն ունեն կենտրոնական դեր: Առաջին դերդքում կարևորվում են հաղորդակցման սրբազան հարթությունում նրան վերագրվող բացառիկ չարխափան հատկությունները, երկրորդ դեպքում դա պայմանավորված է տնտեսական կյանքի բոլոր ոլորտների աշխատողներին աշխատանքային գործիքներով սպահովելու խնդրով: Այս հարցը քննարկվում է աշխատանքի առաջին գլխում:

Դաշտային աշխատանքների ընթացքում գրտոված, ինչպես նաև ազգագրական գրավոր աղբյուրներից մեզ հասած դարբնոցային ծեսերի տեքստաբանական և նշանաբանական ուսումնասիրությանն է նվիված հետազոտության երկրորդ գլուխը: Այստեղ փորձ է արված բացահայտել ծեսերի թեմաները, որոնք պատմվում են ծիսական խորհրդանշանների միջոցով: Կատարված վերլուծության արդյունքում ցույց է տրվում, որ դարբնոցային ծեսերի թեմաները առնչվում են առասպելական մտածողության շրջանին և ներկայացնում են հնդեվրոպական նախնական առասպելի մետադագործական կոդը, որում առասպելական գլխավոր հերոսի դերում հանդես է գալիս ամպրոպամարտիկի և արարչագործի հատկանիշներ կրող դարբինը: Ծեսերի հիմքում ընկած առասպելական հիմնական թեմաները երկուսն են՝ վիշապամարտը և արարչագործությունը: Առաջինում դարբինը կրում է ամպրոպամարտիկ հերոսի դեր, որը հաղթում է կարգախափան ուժին ու փրկում աշխարհը կործանումից: Այստեղ հիմնականում դարբինը հանդես է գալիս լուսատուները՝ արևը և լուսինը փրկողի դերում: Երկրորդում, դարբինն ինքն է հանդիսանում լուսատուներն ու տիեզերքն արարողը: Ըստ հայկական ծեսերի տեքստաբանական վերլուծության, կարելի է ասել, որ դրանցում առկա է երկու առասպելական թեմա, որոնց համաձայն, դարբինը տիեզերքն արարող և այն պարբերաբար վերակենդանացնող հերոսն է: Իսկ «Արտավազդի շղթայման ծեսում» նշվածին զուգահեռ բացահայտվում է նաև դարբնի փրկչային մեկ այլ՝ ժամանակային ցիկլը վերանորոգողի և դրա միջոցով տիեզերքը կործանումից փրկողի դեր:

Հարկ է նշել, որ դարբնոցային ծեսերի, ինչպես նաև տեխնոլոգիական գործընթացի նշանաբանական ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են ոչ միայն վիշապամարտին և արարչագործությանը վերաբերող թեմաներ, այլ նաև երկվորյակներին առնչվող թեմա, որը դրսևորվում է դարբին-ամպրոպամարտիկի և նրա կենդանակերպ երկվորյակ խոյ-զնդանի պայքարում: Դարբնոցային ծեսերի վերլուծության ժամանակ բացահայտվել են նաև դարբին-ամպրոպամարտիկի և որսորդությանն առնչվող թեմայի առանձին հատվածներ: Հարկ է նշել, որ հեղինակի կողմից դարբնոցային առանձին ծեսերի վերլուծության ժամանակ արվել են այնպիսի հետևություններ, որոնք կարող են անընդունելի համարվել հնդեվրոպական նախնական առասպելի ուսումնասիրողների կողմից: Մասնավորապես, դրանց թվում կցանկանայինք նշել այն ենթադրությունը, որ ամպրոպամարտիկը և վիշապը ծիսական որոշ դրվագներում ներկայանում են երբեմն որպես մեկ կերպարում միահյուսված հերոս, երբեմն որպես տարասեռ երկվորյակներ:

Աշխատանքում ծեսին մոտեցման հիմնական սկզբունքներն են.

ա. հիմնական ծիսական խորհրդանիշների և դրանց միջել գործող կապերի պարզաբանումը,

բ. ծիսական խորհրդանիշների և ծեսի նպատակի ժողովրդական բացատրության կապի բացահայտումը,

գ. հետազոտության առարկա ծիսական խորհրդանիշների և հայ ժողովրդական սովանդույթների միջև կապը, ինչպես նաև այդ խոր-

հրդանիշների հնդեվրոպական, հարևան ժողովուրդների և համաշխարհային մշակույթում գոյություն ունեցող զուգահեռների համեմատությունը,[1]

դ. ծիսական խորհրդանիշների կերպի և նշանակության կապի պարզաբանումը և խորհրդանիշների իմաստաբանությունը,

ե. ծեսի սյուժեի հետ վերջինիս համադրության միջոցով, սյուժեի հիմքում ընկած նախնական առասպելաբանական թեմայի և դրանում դարբնի գործառույթի ուրվագծումը:

Կարևոր սկզբունքներից է եղել նաև ծիսական նշանների իմաստը պարզելու նպատակով ծեսի և առասպելի միջև գործող կապերի կիրառումը: Այս առումով սկզբունքային նշանակություն չի տրվել այն հարցին, թե դրանցից որն է ընկած մյուսի հիմքում, այլ կարևորվել է դրանց միջև գործող փոխկապակցվածությունն ու հոմոլոգիան,[2] որը հնարավորություն է ընձեռում զուգահեռների համեմատությամբ ճշտելու թե մեկը, և թե մյուսը:

Աշխատանքի թեման պրոբլեմային է ոչ միայն հայ ազգագրության, այլ ընդհանրապես ազգաբանության համար: Հավատալիքային համալիրում դարբնի ունեցած դերի լուսաբանումը մինչև այժմ կատարվել է առասպելաբանական նյութի վերլուծությամբ[3]: Այս աշխատանքը ազգաբանական բնույթի հետազոտություն է, քանի որ դրանում փորձ է արվում ծիսական երևույթների նշանաբանական ուսումնասիրության միջոցով բացահայտել ծեսի հիմքում ընկած առասպելաբանական թեմաները: Իսկ աշխատանքի երրորդ գլխում արհեստի ծագմանը վերաբերող դրույթների միջոցով փորձ է արվում պաշտպանելու և ավելի խորացնելու ազգաբանության մեջ տեխնոլոգիային վերաբերող նոր մոտեցումները[4]: Այն նաև սկզբնական մի փորձ է ուղղված մարդկային մշակույթի դրսևորման վաղ փուլերում ծեսերի առաջացմանն ու արմատներին վերաբերող հարցերի բացատրությանը: Հայ ազգաբանության մեջ առաջին անգամ ազգագրական նյութի լուսաբանության և հնդեվրոպաբանության մեջ առաջ քաշված կարծիքների հիմամբ, փորձ է արվում պատասխանելու հայոց մշակույթում դարբնության ծագման արմատներին վերաբերող հարցերին: Հայոց դարբնոցային մշակույթին վերաբերող նյութերը բացի հեղինակի դաշտային հետազոտություններից[5] քաղվել են նաև հայ պատմիչների երկերից,[6] հայ ազգագրության երախտավորների գրառած նյութերից ու ուսումնասիրություններից,[7] ինչպես նաև հնագիտական բնույթի ուսումնասիրություններից[8]: Համեմատական նյութի առումով հույժ արժեքավոր կարելի է համարել աբ-

---

[1] Ասվածը համահունչ է Ռ. Բարտի կոդից այլ նշանի հետ հարաբերվելիս նշանը վիրտուալ և ակտուալ հատկանիշներով ընորոշմանը: Տես *Р. Барт*, Избранные труды (семиотика, поэтика), М., 1989, с. 92, 246.

[2] *К. Леви-Строс*, Структурная антропология, М., 1983, с. 92, 208.

[3] *В.Ф. Миллер*, Очерки арийской мифологии в связи с древнейшей культурой, т. 1, Асвины-диоскуры, М., 1976, с. 278-291. *О. Шрадер*, Сравнительное языковедение и первобытная история. – Лингвистическо-исторические материалы для исследования индогерманской древности, Спб., 1886, с. 231-246. *В.В. Иванов, В.Н.Топоров*, Проблемы функций кузнеца в свете семиотической типологии культур.- Материалы всесоюзного симпозиума по вторичным моделирующим системам, т. 1 (15), Тарту, 1974. *Д.А. Ольдерогге*, Сумаоро – царь кузнецов и древняя культура Западной Африки.- Africana: Этнография, история, лингвистика, Труды Института этнографии АН СССР, т. 93, М.-Л., 1969.

[4] *R.J.Forbes, E.J.Dijkterhuis*, A history of Science and Tecnology, vol. 1, London, 1963. *T.A.Wertime*, The Coming of Age of Steel, Leiden, 1961, p. 4-12. *Ibid.*: Pyrotecnology: Man's First industrial Uses of the Fire.- "American scientist", vol. 61, n. 6, 1973, p. 672. *А.К. Байбурин*, Семиотический статус вещей и мифология.- Материальная культура и мифология, Л. 1981. *Его же*. Семиотические аспекты функционирования вещей.- Этнографическое изучении знаковых средств культуры, Л. 1989.

[5] *Ս. Թադևոսյան*, Դաշտային ազգագարկան նյութեր, (այսու՝ ԴԱՆ):

[6] *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Եր., 1983, էջ 232-233, *Մովսես Խորենացի*, Մատենագրութիւն, Վենետիկ, 1865, էջ 234-295, Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1976, էջ 80-81, *Ստեփանոս Օրբելյան*, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 66:

[7] *Ե. Լալայան*, Վայոց Ձոր - Ազգագրական հանդես (այսու ԱՀ), գ. 19, թիվ 1, Թիֆլիս, 1910, էջ 144: *Նույնի*, Վայոց Ձոր, ԱՀ, գ. 14, թիվ 2, Թիֆլիս, 1906, էջ 144: *Նույնի*, Զանգեզուր. ԱՀ, գ. Դ, թիվ 2, Թիֆլիս, 1898, էջ 110: *Նույնի*, Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 286, նույնի, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 200, *Ղ.Ալիշան*, Հին հավատք և հեթանոսական կրոնք հայոց, թիվ Վենետիկ, 1985, էջ 35: *Ստ. Լիսիցյան*, Զանգեզուրի հայերը, Եր., 1989, էջ 166: *Կ. Սեղբոսյան*, Արհեստավորական ավանդույթների արտահայտությունները լենինականցիների կենցաղում:- Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսու՝ ՀԱԲ), գ. 6, Եր., 1974, էջ 234: *Գ. Խալատյանց*, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, М., 1896, ч. 1, с. 314-320; ч. 2, с. 73-77. *Н.Эмин*, Моисей Хоренский и древний эпос армянский, М., 1881, с. 76-77; *Ст. Лисицян*, Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992, с. 146, 164.

[8] *Վ. Աբրահամյան*, Արհեստները Հայաստանում 4-18-դ դդ., Եր., 1956, էջ 43-55, *Կ.Դաֆթարյան*, Դվին քաղաքը և նրա պեղումները, Եր., էջ 154-165, *Բ. Առաքելյան*, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դդ., հ. 1, Եր., 1958:

խազների դարբնոցային մշակույթին նվիրված մի շարք աշխատություններ[9]: Մեզ հետաքրքրող առումով շահեկան են Վ.Իվանովի և Վ.Տոպորովի աշխատությունները, որոնցում ներկայացված են տարբեր, հատկապես, հնդեվրոպական ժողովուրդների դարբնոցային մշակույթի հետ կապված առասպելաբանական շերտերը[10]: Առասպելաբանական նյութի, վերլուծական և տեսական դրույթների առումով կարևոր նշանակություն են ունեցել Լ. Աբրահամյանի,[11] Պ. Ռադինի,[12] Գ.Ս.Կիրկի,[13] Հ. Ֆրանկֆորտի[14] և այլոց աշխատությունները:[15] Չի կարելի չնշել նաև Մ. Էլիադեի,[16] Օ. Ֆրեյդենբերգի[17], Ժ.Դյումեզիլի,[18] Կ.Լեվի-Ստրոսի,[19] Վ. Թերների,[20] Ռ. Բարտի,[21] Է. Կասիրերի[22] աշխատությունների կարևորությունը: Խորհրդանշանի, լեզվական նշանների ուսումնասիրության առումով կողմնորոշող նշանակություն են ունեցել Ֆ. դե Սոսյուրի,[23] Է. Բենվենիստի,[24] Ռ. Յակոբսոնի,[25] Թ.Գամկռելիզեի և Վ.Իվանովի[26] աշխատությունները: Հայկական բառարմատների ստուգաբանության համար հիմք են ծառայել Հր. Աճառյանի «Հայերենի արմատական բառարան» քառահատորը[27] և «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատությունը:[28]

Առասպելի և ծեսի ծագման հոգեբանական արմատների հարցերի առնչությամբ օգտվել ենք Կ.Գ. Յունգի,[29] Կ. Կերենիի[30] և Է. Ֆրոմի[31] ուսումնասիրություններից, որոնցում առաջ են քաշված հոգեբանական և մշակութային մի շարք հիմնարար հարցեր:

---

[9] *И.А. Аджинджал*, Из этнографии Абхазии.- Материалы и исследования, Сухуми, 1996; *В.Г.Ардзинба*, К истории культа железа и кузнечного ремесла. – Древний Восток: этнокультурные связи. М., 1988; *Н.С. Джанашия*, Статьи по этнографии Абхазии, Сухуми, 1960, с. 72-74.

[10] *В.В. Иванов, В.Н. Топоров*, ЭЯнᵃН ᵃЯА.: *Их же*: Исследования в области славянских древностей, М., 1974. *Их же*: Инвариант и трансформации в мифологических и фольклорных текстах.- Типологические исследования по фольклору, М., 1975. *Их же*: Мифологические названия как источник для реконструкции этногенеза и древней истории славян. – Вопросы этногенеза и этнической истории славян и восточных романцев, М., 1976.

[11] *Л. Абрамян*, Первобытный праздник и мифология, Ереван, 1983. *Его же*, Змей у источника.- Историко-этнографические исследования по фольклору, М., 1994.

[12] *P. Radin, Tricster*. A Study in American Indian Mythology, N.Y., 1969. *Ibid.*: The World of Primitive Man, N.Y., 1971.

[13] *G.S.Kirk*, Myth, Its Meaning and Function in Ancient and Other Cultures, Berkeley – L.A., 1970.

[14] *H.A. and H. Frankfort*, Myth and Reality.- Before Philosophy, Chicago, 1967.

[15] *A.Lang*, Custom and Myth, Yorkshire, 1974, D. Maclagan, Creation Myths: Man's Introduction to the World, L. 1977.

[16] *M. Eliade*, Myth, Dreams and Mysteries, L. – Glasgow, 1960. *Ibid*: Ocultism, Witchcraft and Cultural Fasions. Essays in Com parative Religions, L. – Sydney, 1971. *М.Элиаде*, Космос и история, М., 1981.

[17] *О.Е. Фрейденберг*, Поэтика сюжета и жанра, Л., 1936. *Ее же*: Миф и литература древности, М., 1978.

[18] *Ж.Дюмезиль*, Верховные боги индоевропейцев, М., 1986. *Его же*: Скифы и нарты, М., 1990.

[19] *К.Леви-Строс*, указ. раб.

[20] *V.W.Turner*, The Forest of Symbols: Aspects of the Ndembu Ritual, N.Y., 1967.

[21] *Р.Барт*, указ. раб.

[22] *E.Cassirer*, The Philosophy of Symbolic Forms, Vol. 2, Mythical Thought, New Haven, 1955. *Э.Кассирер*, Сила метафоры. – Теория метафоры, М., 1990.

[23] *Ф. де Соссюр*, Заметки по общей лингвистике, М., 1990.

[24] *Э.Бенвенист*. Общая лингвистика, М., 1974.

[25] *Р.О. Якобсон*, Роль лингвистических показаний в сравнительной мифологии.- Труды VII международного конгресса антропологических наук, т. 5, М., 1970.

[26] *Т.В. Гамкрелидзе, В.В. Иванов*, Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1986.

[27] *Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Եր., 1971:

[28] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., 1981

[29]. *K.G.Jung*, On the Psychology of the Tricster Figure.- P.Radin, Tricster, N.Y., 1969, p. 195-211. *К.Г. Юнг*, Подход к бессознательному. *Его же*: Об архетипах коллективного бессознательного.- К.Юнг, Архетип и символ, М., 1991.

[30] *K.Kereny*, The Tricster in Relation to Greek Mythology.- P.Radin, Tricster, N.Y., 1969, p. 173-191, *K.G. Jung, K.Kereny*, Introduction to the Science of Mythology, L., 1951.

[31] *Э.Фромм*, Иметь или быть? М., 1990. *Его же*: Забытый язык: Введение в науку понимания снов, сказок и мифов.- Э.Фромм, Душа человека, М., 1992.